

Հետ: ան կը յաղթվի և կոչնչանայ, հա-
ւաստացում են նրանք և այդ մտքից սաստիկ
հաստացում են: Նոքա փորձով գիտեն, թէ ինչ
բան է եւրոպական կոնցրետը, երբ նրան չէ
մասնակցում Ֆրանսիական ջուրը և առա-
ջուց վախենում են պրոսական թմրուկի
ընդ զորանց: Նոքա հաւատացած են, որ այդ
թմրուկի ոչնչացող և ձնշող ձայնին ոչինչ
չէ կարելի ընդդիմադրել, մանաւանդ եթէ
չէ թմրուկի հետ միանայ անգլիական պա-
ստաւական փողը:

Անգլիայի հետ աստորո-ուշագրական կա-
ռավարութիւնը բանակցում է և ամենքին
յայտնի է, որ Բերլինը Լոնդոնի հետ աւելի է
շօնորոշեալ: Բանակցում, աշխատելով
Անգլիային կցորդել աստորո-գիւրմանական դաշ-
նադրութեանը: Նատենը հաւատացում են,
որ պայմանները արդէն պատրաստ են, մնում
է նրանց ստորագրել և որ երկու կողմերի քա-
ղաքականութեան ղեկավարները միատեսակ
ցանկանում են ստորագրել այդ պայմանները:

Աստորո-Գերմանական դաշնագրին Անգլիա-
յի կցորդվելը առիթ է տալիս Վիէնայի
քաղաքագէտներին վախենալ Ֆրանսիայի վի-
ճակի համար և այդ է պատճառը, որ նոքա
այդ պետութեանը խորհուրդ են տալիս զոր-
ծողութիւններ անգլիական պահպանել:

Գարմանի զործը աստորական քաղաքա-
գէտներին առիթ տուեց ուրախանալու, ու-
րով հետևեց նոքա կարծում էին, որ այդ զործը
առիթ էր տալ Բուսաստանի և Ֆրանսիայի
յարաբերութիւններին ստուելուն: Մանաւանդ
նրանց ուրախացրեց Վիէնայում տարածված
այն սխալ լուրը, իբր թէ ռուսաց զեականը
Փարիզում պէտք է թողնէր իր տեղը, եթէ
Ֆրանսիական կառավարութիւնը Գարմանին
չը յանձնէր Բուսաստանին: Հէնց որ այդ
լուրը տարածվեցաւ Վիէնայում, «Fremden-
blatt» լրագիրը մի յօդուած տպեց, որով ա-
պացուցանում էր, թէ Ֆրանսիան պարտաւոր
չէ կատարել Բուսաստանի պահանջը: Այդ-
պիսի միտք պաշտպանելը շատ օտարադէ-
ր աստորական պաշտօնական լրագրի համար,
քանի որ Աստորիան յանձնում է ամեն տե-
սակ չարագործներին բոլոր պետութիւններին
առաջին պահանջի համեմատ: Ամենքը կա-
րող են խօսել Տիւրքիայի իրաւունքի
մասին, բայց Աստորիան այդ չէ կարող անել:
Այդպիսի զեպերում նա պէտք է լուծի ի նկա-
տի առնելով, որ ինքը յետ է տուել այնպիսի
սխալ յանձնարարներին, որոնց մինչև անգամ ոչ
եղ չէ պահանջել:

ԱՅՊԱՆՈՍԱՆ

«Times» լրագրի մէջ տպված է մի թղթ-
թաղանթիւն Կարուից, որը նկարագրում է
անգլիացիների դրութիւնը նրանցից զբաւած
երկրի մէջ: Թղթաղանթի նպատակն է հաստա-
տել, որ Անգլանիստանի միացնելը շնորհա-
տանի հետ անհրաժեշտ է: Թղթաղանթը ի
նկատի չառնելով, որ անգլիական հասարա-
կական կարծիքը բոլորովին հակառակ է այդ
մտքին, պատմում է, թէ ինչ կը պատահի,
եթէ Անգլանիստանը անկախ մնայ: Այդ
պատմութիւնը բաւական հետաքրքիր է:
Թղթաղանթը ամենից առաջ մատնացոյց է լի-
նում այն հանգամանքի վրա, որ անգլիացիք
ոչ մի յարմար աշխատանք իշխան չունեն ի
նկատի, որ կարողանան նրան աշխատանք
գտնել բարձրացնել: Կարուի մէջ այժմ հա-
ւաքված են Անգլանիստանի թագաւորոջ տան
բոլոր անդամները բացի երկուսից: Բայց զը-
բանցից ոչ մէկը ընդունակ չէ բարձրանալ
աշխատանք գտնել վրա և մի և նոյն ժա-
մանակ պաշտպանել անգլիական շահերը:
Նրանցից ոչ մէկը տեղական ազգաբնակու-
թեան մէջ ոչինչ հեղինակութիւն չունի և
բացի այդ նոքա ամենքը միմեանց փոխա-
դարձապէս ատում են: Թղթաղանթը ասում է,

որ դրանցից ընտրված է միայն իսկոյն գահին-
կէց կը լինի, հէնց որ անգլիական զօրքերը
կը հեռանան Կարուից: Եւ մի լինելու համար
միակ ընդունակ մարդը Արդուրախման-խանն
է, որ թէպէտ շատ ժամանակ մնացել է
Բուսաստանի մէջ և բարեկամ է ռուսների
հետ, այնու ամենայնու մեծ հեղինակու-
թիւն ունի անգլիացիների մէջ և հէնց որ
անգլիացիք կը հեռանան, նա առաջ կը տը-
րապետէ Կարուի և յետոյ մարդը Անգլա-
նիստանը: Մնում է ուրեմն Արդուրախման-
խանին անգլիացիների կողմը դարձնել և այդ
զործը անկարելի է: Արդուրախման-խանը
խական աշխատանք չէր լինի, եթէ իր բա-
րեկամական զգացմունքները դէպի Բուսաս-
տանը արգելէին նրան անգլիացիների կողմը
անցնել այն դէպքում, եթէ անգլիացիների
առաջարկութիւնները նրա համար չհաւատ
լինեն: Այդպիսով անգլիացիք երկու կերպ
կարող են դուրս գալ ներկայ դժուար դրու-
թեանից. կամ պէտք է Արդուրախման-խանին
իրանց կողմը դարձնեն, կամ Անգլանիստանը
միացնեն Հնդկաստանին: Անգլանիստանը Հնդ-
կաստանին միացնելու մասին խօսք անգամ չէ
կարող լինել, որովհետև անգլիական պարա-
մենտի մէջ հազիւ թէ տաս մարդ գտնվեն,
որոնք զուցէ համաձայնվեն այդ մտքի հետ,
միւսները հակառակ կը լինեն: Անգլիական
կառավարութիւնը իմանալով այդ միջև ան-
գամ առաջարկութիւն չի անի: Մնում է
միայն Արդուրախման-խանին փողի օգնու-
թեամբ անգլիացիների կողմը դարձնել:

Ինչպէս երևում է Արդուրախման-խանը
բոլորովին մտադիր չէ բանակցութիւններ ըս-
կան անգլիացիների հետ: Գերեզալ Բօքերտս,
որ չափազանց ցանկանում է նրա հետ բա-
նակցութիւններ սկսել, չէ կարողանում հաս-
տատ իմանալ Արդուրախման-խանի բնակու-
թեան տեղը:

«Daily News» լրագրի տեղեկութիւնների
համեմատ Մահմեդ-խան փակվել է Գահինի
մէջ, յարաբերութիւններ է կապել Արդու-
րախմանի հետ և հրաժարվելով բանակցել
գերեզալ Բօքերտսի հետ, մտադիր է արշաւել
Կարուի վրա:

ԳԵՐՄԱՆԻԱ

Մարտի 1-ին գերմանական պարլամենտի
մէջ կարգադրեցաւ 1874 թ. զինուորական օ-
րէնքի փոփոխման նախագիծը: Նախագիծը
ընթերցանութիւնից յետոյ պարլամենտի մէջ
վիճարանութիւններ եղան, որի ժամանակ
գերմանական պարլամենտի անդամ գերեզալ-
Ֆելքմարշալ կոմս Մօլտկէ մի ձուռ կարգաց,
որից կարելի է իմանալ Գերմանիայի զինուո-
րական կուսակցութեան տրամադրութիւնը:
Այդ ձառը հետեւեալն է:

«Ով կարող է բացատրել, որ Եւրոպան հա-
ռաչում է զինուորական աշխարհի ձնշման
տակ: Ազգերը մէկը միւսի դէմ զինուորով
են փոխադարձ անհաստատութեան պատ-
ճառով: Այդ անհաստատութիւնը և
կասկածը կարող են աւելի շուտ ոչնչ-
լանալ կառավարութիւնների համաձայնու-
թեամբ, քան թէ միջազգային եղբայրու-
թեան, միջազգային պարլամենտի և ուրիշ
այս տեսակ յիմարութիւնների օգնութեամբ:
Պարոններ, բոլոր ազգերը խաղաղութեան
պէտք ունեն և ես կարող եմ հաւատացնել,
որ բոլոր կառավարութիւնները քանի որ ոյժ
կուենան, կը պահանջեն նրան: Նատենը
կառավարութեան վրա նայում են ինչպէս մի
թշնամի օյժի վրա, որին հարկաւոր է ամեն
կերպ սահմանափակել: Ես հակառակ կար-
ծիքի եմ. կառավարութիւնը պէտք է ու-
ժեղացնել և բոլոր միջոցներով պաշտ-
պանել: Թոյլ կառավարութիւնը տարա-
բաղութիւն է ամենքի համար և վտանգա-
ւոր է գրացու համար: Մենք վկայ ենք եղել

այնպիսի պատերազմների, որոնց ոչ թէ ժո-
ղովուրդները կամ պետութեան գլուխն են
ցանկացել, այլ կուսակցութիւնների առաջ-
նորդները, որոնք ազգել են առաջ ժողովուր-
դի և յետոյ թոյլ կառավարութեան վրա:
Ներկերի նուաճելու և վեժինդրութեան
ցանկութիւնը, ներքին կարգերից անբաւական
լինելը, դարերի ընթացում մի այլ պետու-
թեան հպատակ դարձած ցեղակից ժողո-
վուրդը նորից նուաճելու ձգտումները, այս և
ուրիշ շատ պատճառներ կարող են նոր խառ-
նակութիւնների տեղի տալ և այդ պատճա-
ռով ես երկուք եմ կրում, որ մենք զեռ ևս
երկար ժամանակ ստիպված կը լինենք ծան-
դէնքեր կրել մեր պատմական զարգացման և
համաշխարային դրութեան պատճառով: Եթէ
պատմաբանօրէն խօսենք, Գերմանիան իբրեւ
կայսերութիւն Եւրոպական պետութիւնների
ընտանիքում նոր անդամ է և այդ նոր ան-
դամի վրա թեւեւ հաւատարմութեամբ են նայում,
մինչև որ նրա հետ լաւ կը ծանօթանան:
Իսկ ինչ կը վերաբերի մեր աշխարհագրական
դրութեանը, մեր բոլոր հարեանները ետե-
ւից ազատ են, նոքա ետեւից ունեն Պրու-
սիան կամ Ալպան սարերը, կամ կի-
սպալների ժողովուրդները, որոնցից վախե-
նալու առիթ չունեն, մինչդեռ մենք չըբա-
պտոված ենք եւրոպական մեծ պետութիւն-
ներով:

Արեւելեան և արեւմտեան մեր հարեանները
իրանց երեսը մի կողմ պէտք է չուռ տան,
իսկ մենք ամեն կողմ: Մեր սահմանների մօտ
նոքա կարող են և արդէն կենտրոնացրել են
զինուորական նշանաւոր ոյժեր, մինչդեռ մեր
զուրկերը հաւասարապէս բաժանված են
ամբողջ կայսերութեան մէջ: Այդ իրողու-
թիւնը մենք մեզ համար թշնամական չը
պէտք է համարենք: Եթէ մեր զրացիները
Գերմանիան իրանց համար վտանգաւոր են հա-
մարում, նոքա իրանց տեսակէտից արդար են,
բայց այնուամենայնիւ մենք այդ պայմանները
պէտք է ի նկատի առնենք: Պէտք է ի նկա-
տի ունենալ նոյնպէս, որ մեր շուրջը զինուո-
րական ոյժերը մեծանում են:

Յետոյ գերեզալ Մօլտկէ մատնացոյց է լի-
նում Բուսաստանի և Ֆրանսիայի զինուորա-
կան ոյժերի վրա: Քանիչանիքով հաստա-
տում է, որ Բուսաստանը զեռ ռուս-թիւր-
քաց պատերազմից առաջ, մեծացրել էր իր
զինուորական ոյժերը և հիմա էլ շարունա-
կում է մեծացնել, որ Ֆրանսիան Ֆրանսա-
գերմանական պատերազմից յետոյ կրկնապատ-
կից իր զինուորական ոյժերը, մինչդեռ Գեր-
մանիան չը փոփոխեց իր զինուորական ոյժերը:
Այդ բոլորը ասելուց յետոյ, Մօլտկէ շարու-
նակում է:

«Այսպիսի դրութեան ժամանակ մեզանից
պահանջում են, որ մենք ամենից առաջ զի-
նաթափ լինենք: Միթէ Գերմանիան երբ և
իցէ զէնք է բարձրացրել, եթէ ստիպված չէ
եղել պաշտպանել իրան: Ուրեմն, մենք չենք
կարող ընդդիմանալ կառավարութեանը, երբ
նա առաջարկում է չափաւորապէս մեծացնել
մեր զինուորական ոյժերը, որպէս զի մեր զը-
բացիներից յետ չը մնանք: Պէտք է ցուել
պարոններ, որ անհրաժեշտութիւնը գերմա-
նական ազգից նոր զոհարելութիւններ է
պահանջում: Ճշմարիտ է զոհարելութիւն-
ները և ծանր աշխատանքը վերանորոգել մեր
ազգութիւնը (ծափահարութիւններ), բայց
ծերերը յիշում են, որ թշնամու արշաւանք-
ները բոլորովին ուրիշ տեսակ զոհեր են խը-
լում, քան թէ նրանք, որոնք այժմ պահանջ-
վում են: Նոյն իսկ պետութեան կրեդիտը
կախված է նրա անվտանգ լինելուց: Ի՞նչ պի-
սի երկուք կրկնէր Բօքսայի մէջ, ի՞նչպէս
կը փոխվէին սեփականական յարաբերութիւն-
ները, եթէ կարելի լինէր կասկածել պետու-
թեան ամրութիւնը: Չը մոռանալ, պարոն-
ներ, որ գերմանական կայսերական հզօրու-
թեան անկումից յետոյ, որ Գերմանիան պա-

տերազմի դաշտ էր դարձել, որ չվեղացիք,
Ֆրանսիացիները և նոյն իսկ գերմանացիք ա-
ւելի քան թէ մի դար շարունակ Գերմանիան
անապատ դարձրին: Միթէ, Նեկկարի, Բէյնի և
երկրի խորքերում գտնված աւերակները մեր
թուլութեան և դրացիների ինքնակամու-
թեան յիշատակներ չեն: Ո՞վ կը ցանկանայ
վերադառնալ այն ժամանակներին, երբ օտար
թագաւորի հրամանով գերմանացի զինուոր-
ները պէտք է Գերմանիայի վրա գնային: Ոչ,
պարոններ, ամենից առաջ պաշտպանենք
կայսերութեան պատիւը և ապահովութիւ-
նը, պաշտպանենք վաղուց ցանկացած և վեր-
ջապէս ձեռք բերած ազգային միութիւնը,
պահպանենք խաղաղութիւնը, քանի որ մեզ
վրա չեն յարձակվում: Մեր ոյժը և մեր զէն-
քերը սպառնալիքներ չեն լինի, այլ խա-
ղաղութեան պահպանու գրաւականներ:
Թոյլ ոյժերով երբեք չէ կարելի նպատակին
հասնել: Եւրաքանչիւր ազգի բաղդը նրա սե-
փական ուժից է կախված: Կառավարութեան
առաջարկութիւնը ես իրաւացի, ժամանակա-
յարմար և անհրաժեշտ եմ համարում:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Գերմանական զեպանը փարվում իշխան
Հօնկոյէ նորերում յետ կանչեցաւ Բեքլին կա-
ռավարութեանց, լրագիրները հաղորդում են թէ
զեպանի յետկանչելու պատճառը այն է, որ
նրան վեց ամսով պէտք է յանձնվի արտաքին
գործերի մինիստրի պաշտօնը, Բացի այդ իշխանին
առաջարկեցաւ ժամանակաւորապէս փոխարինել
գերմանական պետութեան կանցլեր իշխան Բիւ-
սարկի և պրուսական մինիստրութեան փոխնա-
նարգահի պաշտօնը վարել, բայց նա հրաժարվեցաւ
այդ առաջարկութիւնների ընդունելուց: Իշխան
Հօնկոյէ իշխան Բիւսարկի առանձին հաւատար-
մութիւն ունի:

—Լատիքի «Daily News» լրագրին հաղորդում
են, որ Հերաւում դարձեալ կռիւ սկսվեցաւ Հե-
րաւի և Կարուի գուռերի մէջ: Կարուցիները
վերջապահապէս ջարդված են:

—Կարմանու լրագիրները լուր հաղորդեցին, որ
մի յոյ Պապանդոպուլօ անունով մտադիր է եղել
փորձել սուլթանի կեանքին ձեռնամուկ լինել: Այդ
յոյնը բռնված է և իրան Անգլիայի հպատակ է
յայտնել: Նրա մօտ գտել են զինամիտով լցված
12 Բուսմեր, Եւրոպայի քանութեան ժամանակ առաջ
խոստովանվել է, որ մտադիր է եղել սուլթանի
կեանքին ձեռնամուկ լինել, իսկ յետոյ մերժել է
իր առաջին ցուցումը և ասել է, որ ռուսները
նրա տանը զրկել է իր եղբայր Արիստառքս, որ նո-
րերում մահմետականութիւն է ընդունել և նրան
մատնել է:

—Լրագիրներին Լօնդոնից հաղորդում են իբրեւ
ենթադրութիւն, որ անգլիական և ռուսաց կա-
ռավարութիւնների մէջ եղած բանակցութիւնները
կարող են այս հետեանքներին հասնել. Բուսաս-
տանը իրաւունք կուենայ գրաւել իր զօրքերով
Մերլ, իսկ Հերաւը կը գրավի անգլիական կամ
պարսկական զօրքերով: Երբ ռուսները կը մտքեն
Մերլը, անգլիացիք կը վերադարձնեն Անգլանի-
ստանին Հերաւը:

ՄԵԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Կիւն, 6 մարտի: Կիւնի համալսարանի մի
ուսանող Պոլիկարպով անունով, մարտի 4-ին
իր ընկալարանի մէջ վիրաւորեց խանջաւով մի
պարոնին, Պօլօզովին, որ եկած էր նրա մօտ
ձաշելու համար: Պօլօզովի հասարակական
կողմը անյայտ է: Երբ որ Պօլօզով կարգա-
ցաւ ազատվել մարդապանի ձեռքից և դուրս
վազել, գաւթի, Պոլիկարպով անձնասպա-
նութիւն գործեց ընկալարանի արձակելով իր վը-
րա: Պոլիկարպովի դիակը հետ խուզելու
ժամանակ գտան նրա ժիլէտի տակ կախարած
խանջաւի պատեանը:

Խմբագիր—հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ